ԹԵՄԱ 6

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 6.6. Բնակչության սեռատարիքային կազմը

1. Միջին հաշվով աշխարհում յուրաքանչյուր 100 աղջկա հաշվով ծնվում է 105-106 տղա: Մանկական տարիքում տղաների քանակական գերազանցությունը պահպանվում է, երիտասարդ տարիքում՝ հավասարակշռվում: Բարձր տարիքային խմբերում կանանց բաժինը ավելի մեծ է, որովհետև նրանք տղամարդկանցից երկարակյաց են: Աշխարհում տղամարդիկ 50 մլն-ով գերազանցում են կանանց:

Նշեք կանանց կամ տղամարդկանց գերակշռություն ունեցող 5-ական երկիր:

Լատվիայում, Էստոնիայում, ՌԴ-ում, Ուկրաինայում 100 տղամարդու հաշվով կա 113-116 կին, Բելառուսում, Մոլդովայում, Հայաստանում, Վրաստանում՝ 105-110: Տղամարդկանց բաժինը մեծ է արաբական-մահմեդական երկրներում, Իրանում, Հնդկաստանում, Չինաստանում: Դա պայմանավորված է կանանց վաղ ամուսնություններով, հաճախակի ծննդաբերությամբ ֆիզիկական ծանր աշխատանքով, անբավարար սննդով, բարձր մահացությամբ, և այլ պատճառներով:

Բնակչության սեռային կազմի տարբերությունները մեծ չեն խոշոր տարածաշրջաններում. օրինակ՝ տղամարդկանց բաժինն ամբողջ բնակչության մեջ Ասիայում կազմում է 51,2 %, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում՝ 49,9 %, մինչդեռ Եվրոպայում այն 48,7% է, իսկ ԱՊՀ երկրներում՝ 47,2 %: Աշխարհի բնակչության սեռային կազմի քարտեզում հստակ առանձնացված են կանանց կամ տղամարդկանց գերակշռության ոչ միայն խոշոր տարածաշրջանները, այլև երկրները:

2. Տարիքային կազմն իր հերթին ազդում է ժողովրդագրական մյուս ցուցանիշների՝ ծնելիության և մահացության մակարդակի, աշխատանքային ռեսուրսների տեսակարար կշռի վրա: Մեծահասակների բաժինը մեծ է վերարտադրության առաջին տիպի երկրներում. Եվրոպա՝ 18%, Հյուսիսային Ամերիկա՝ 15%: Եվրոպայի զարգացած երկրներում ցածր է ծնելիությունը, բարձր է կյանքի միջին տևողությունը: Սրանք էլ «ծեր» ազգերն են: Օրինակ՝ Գերմանիայում երեխաները կազմում են բնակչության 15,5%-ը, ծերերը՝ 23,3%-ը: Հիշենք, որ ՀՀ-ն թևակոխում է «ազգի ծերացման» փուլ: Գիտնականների

կանխատեսումներով XXI դարի կեսերին բնակչության ծերացման վտանգը կսպառնա ողջ աշխարհին, և մեծահասակների ու երեխաների բաժինը կհավասարվի: Աֆրիկայում երեխաների բաժինը 41% է, Ասիայում՝ 27 %, տարեցների տեսակարար կշիռը համապատասխանաբար՝ 4,7%: Աշխատանքային տարիքի բնակչությունը Աֆրիկայում կազմում է 55, Ասիայում՝ 66 %:

3. Հին Հունաստանում և Հռոմում կյանքի միջին տևողությունը 25 տարի էր, XX դարի կեսերին՝ աշխարհում միջինը կազմեց 45 տարի, իսկ XXI դարի 20-ական թթ. սկզբներին բարձր կենսամակարդակ ունեցող երկրներում՝ Ճապոնիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Շվեդիայում և Ավստրալիայում, այն կազմում է 83-85 տարի, Սոմալիում, Մոզամբիկում, Բուրկինա Ֆասոյում՝ 36-40 տարի: Տղամարդկանց կյանքի միջին տևողությունը 65,1 տարի է, կանանցը՝ 69,6 (ինչո՞ւ):

4. Զարգացող երկրներին բնորոշ է լայն հիմքով և նեղ գագաթով, իսկ զարգացած երկրներին՝ նեղ հիմքով, համեմատաբար լայն միջնամասով ու գագաթով բուրգ: Անցումային տնտեսություն ունեցող երկրների բուրգի տեսքը մի փոքր այլ է՝ ավելի լայն հիմք, նեղ գագաթ՝ զարգացած եվրոպական երկրների համեմատ:

Սեռատարիքային բուրգի միջին մասը ցույց է տալիս աշխատանքային տարիքի բնակչության քանակը, որի միջոցով էլ բավական ճիշտ գնահատում ենք ևս մի կարևոր բնութագրիչ՝ աշխատանքային ռեսուրսները: